ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____2015թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի «Հողօգտագործողներին պետական աջակցություն տրամադրելու մասին» N 588-Ն որոշման հավելվածի՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետում «տրամադրում» բառից հետո լրացնել «կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ պարտավորություններ ունեցող հողօգտագործողների պարտավորությունների մարում» բառերը.

2) 5-րդ կետում «տեսքով» բառից հետո լրացնել «կամ հիմնադրամի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման եղանակով» բառերը.

3) 6-րդ կետում «ընկերության» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ ընկերություն)» բառերը.

4) 7-րդ և 8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.Սույն կարգի 5-րդ կետում նշված գումարը, ընկերության կողմից տրամադրված աշնանացան ցորենի սերմի դիմաց գումարը կամ հանքային պարարտանյութերը հողօգտագործողներին հատկացնում է հիմնադրամը՝ նախարարության կողմից տրամադրված ցուցակի հիման վրա:

Հիմնադրամը՝ իր հանդեպ ունեցած պարտավորությունների մարումն իրականացնում է հիմնադրամին հատկացվելիք պարտավորությունների արժեքի համամասնորեն նվազեցման եղանակով:

8. Հիմնադրամը իրականացնում է սույն կարգի 5-րդ կետում նշված գումարի կամ աշնանացան ցորենի սերմի արժեքի փոխհատուցումը կամ հանքային պարարտանյութերի տրամադրումը կամ իր հանդեպ ունեցած պարտավորությունների մարումը՝ տվյալ տարվա պետական բյուջեով «Աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին» միջոցառմամբ նախատեսված միջոցներից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի դեկտեմբերի 10-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՎԱՐՉԱՊԵՏ **Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 18-իN 850-Ն որոշման դրույթների կատարման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Որոշման նախագծի խնդիրը վարելահողերի բերրիության բարձրացման և տեղական սերմնաբուծության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է և հողօգտագործողներին պետական աջակցության ցուցաբերումը նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման եղանակով:

Նպատակը և բնույթը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշմա ննախագծի նպատակը սև ցել կատարողներին պետական աջակցության ցուցաբերումն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հանդեպ ունեցած պարտավորությունների մարման եղանակով և պետական աջակցության ֆինանսավորման աղբյուրի հստակեցումը:

Ակնկալվող արդյունքը

Ներկայացված որոշման նախագծից ակնկալվում է վարելահողերի բերրիության բարձրացման և աշնանացան կատարելու համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ աշնանացան ցորենի ցանքսերից ավելացնել համախառն բերքի ծավալները, բարձրացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները, ապահովել տնտեսական աճ:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության և իրավաբանական բաժինների կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայք էջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ **Ա.ՄԽՈՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-ՆՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ **Ա.ՄԽՈՅԱՆ**

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 588-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 18-ի N 588-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ

Նախագիծը պատրաստողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին

_____ **Վ. Ավետիսյան**
(ստորագրությունը)

«_____» _____ 2015թ.